ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"06" ապրիլի 2012թ № 38 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ 1992-1994 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՌՄԲԱԿՈԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՄԱՍՆԱԿԻ ՎՆԱՍՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏՆԵՐԻ ՎԻՃԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.13 կետի դ/ ենթակետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մայիսի 30-ի «Ռմբակոծությունների և ռազմական գործողությունների հետևանքով անօթևան մնացած քաղաքացիներին վնասի փոխհատուցման՝ բնակարանային խնդիրների առաջնահերթ լուծման մասին» N845-Ն որոշմամբ սահմանված կարգի, ո ր ո շ ու մ ե մ.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի սահմանամերձ բնակավայրերում 1992-1994 թվականներին ռմբակոծությունների և ռազմական գործողությունների հետևանքով մասնակի վնասված բնակելի անհատական տների վիճակի ուսումնասիրություն կատարելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Ա. Ուստաբաշյան – մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ – հանձնաժողովի նախագահ

Ռ. Ավետիսյան - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի պետ

Ժ. Բաբայան - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ

Ժ. Թունյան - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի առաջատար մասնասգետ

Հ. Հարությունյան - մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՏՀ գործունեության ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի առաջատար մասնագետ

Վ. Գևորգյան - մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության վարչատնտեսական բաժնի առաջատար մասնագետ

2. Հանձնաժողովի կազմում ընդգրկել համապատասխան համայնքների ղեկավարներին:
3. Հանձնաժողովին՝ ուսումնասիրության աշխատանքներն իրականացնել մինչև 2012 թվականի ապրիլի 30-ը, արդյունքները ներկայացնել հաստատման 7-օրյա ժամկետում:
4. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2012թ. ապրիլի 6
ք. Կապան